



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2024 թվականի N 67-Ա

**«ԿԱՊԱՆԻ N 13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ
ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՍՏԴԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ժաննա Վարդանյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ժաննա Վարդանյանին 2024 թվականի փետրվարի 26-ից մարտի 14-ը ներառյալ տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 13 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Աստղիկ Համբարձումյանին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2024թ. փետրվարի 20
ք. Կապան



Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

/հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ/